ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

15 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1999, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, ՎԵՐՋԻՆ ԷՋ

# «Սա իմ առաջարկն ու նվերն է ազգին»,-ասում է Գալինյանը

Գայանե Կարապետյան



Պոլ Գալինյան

Սեպտեմբերի 17-21-ը «Մոսկվա» կինոթատրոնում առաջին անգամ կցուցադրվի անվանի լուսանկարիչ եւ ռեժիսոր Պոլ Գալինյանի «Վիլյամ Սարոյան. մարդ, գրող» փաստավավերագրական ֆիլմը: «Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական փառատոնի առիթով հայրենիքում է գտնվում անվանի լուսանկարիչը: Նա փափագում է ամերիկահայ գրող, թատերագիր եւ ազգասեր Վ. Սարոյանի մասին պատմող այս ֆիլմը ցուցադրել հայրենիքում: Ֆիլմի պրեմիերան նախատեսվել էր կազմակերպել Հայաստանում, սակայն ինչ-ինչ պատճառներով չստացվեց: Փոխարենը ցուցադրվեց Ֆրեզնոյի «Վիլյամ Սարոյան» թատրոնում: Կինոնկարը ցուցադրվել է աշխարհի 18 երկրների 60 քաղաքներում, շահել 6 մրցանակ, այդ թվում՝ Ֆիլադելֆիայի միջազգային փառատոնի լավագույն վավերագրական ֆիլմի համար սահմանված «Ոսկե մրցանակը»: «Իմ լուսանկարների հերոսները կինոաստղեր էին, հայտնի արվեստագետներ, քաղաքական գործիչներ, հոգեւոր առաջնորդներ: Բայց երկար տարիներ փայփայում էի մի ուրիշ երազանք՝ լուսանկարել Վիլյամ Սարոյանին: 1976 թ. դա ինձ վերջապես հաջողվեց»,-ասում է նկարիչը:

Չնայած նկարչին ուղղված Սարոյանի արտասանած առաջին բառերը հուսադրող չէին՝ «Կորուլ չեմ ուզեր», սակայն ժամեր անց գրողը ոգեւորված հետաքրքրվեց նկարչի ծննդավայրով, պատմել տար տեղի հայերի մասին: Ապա միասին, անհուն կարոտը աչքերում, երգեցին «Կիլիկիան»: 1981-ին, Սարոյանի մահից հետո, Գալինյանը պատրաստում է 10 րոպե տեւողությամբ մի ֆիլմ «Ինչպես նկարեցի Սարոյանին» խորագրով: Ֆիլմը մեծ արձագանք է գտնում, ինչն էլ նկարչին ստիպում է երկար տարիներ ուսումնասիրել գրողի կյանքն ու ստեղծագործությունը, հավաքել արխիվային նյութեր եւ 1991 թվականին ստեղծել մեկ ժամանոց «Վիլյամ Սարոյան. մարդ, գրող»-ը: Սկսվում է 1900-ական թվականների Ֆրեզնոյի մասին ակնարկով եւ ընդգրկում 80 տարվա պատմությունը, մինչեւ գրողի մահը՝ 1981 թվականը:

Ֆիլմը նկարահանվել է նկարչի անձնական ծախսերով: Գալինյանի հավաստմամբ, նկարն առաջարկել են գնել մի շարք օտար կազմակերպություններ: «Սակայն ես վաճառքի իմ դայմաններն եմ դրել. աշխարհի բոլոր հայկական համայնքներում, հաստատություններում ֆիլմի մեկական օրինակը պետք է վաճառվի իրական արժեքով: Սա իմ առաջարկն ու նվերն է ազգին»:

Պոլ Գալինյանը դատարկաձեռն չի եկել հայրենիք: Բերել է Սարոյանի լուսանկարների մի շարք եւ մտադիր է նվիրել Հայաստանի գրականության եւ արվեստի թանգարանին: